Հայտարարություն

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ԾՐԱԳԻՐ
Դրամաշնորհ No. TF016980

ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» պետական հիմնարկը հայտնում է, որ Համաշխարհային բանկի «Հայաստանում Երիտասարդների ներգրավվածության խթանման» դրամաշնորհային ծրագրի /ԵՆԽԾ/շրջանակում **«Ծրագրի մոնիթորինգի և գնահատման /ՄԳ/ մասնագետներ»** հանձնարարականի իրականացման համար խորհրդատու ընտրելու նպատակով հայտարարվում է անհատ խորհրդատուի ընտրության մրցույթ:

Ընտրված մոնիթորինգի եւ գնահատման մասնագետները պետք է իրականացնեն իրենց հանձնարարված թիրախային մարզերում եւ համայնքներում Ծրագրի տարբեր բաղադրիչների շրջանակներում նախատեսված միջոցառումների ընթացքի մոնիթորինգն ու Ծրագրի միջանկյալ եւ վերջնական արդյունքների գնահատումը: Նախատեսվում է վարձել ՄԳ 5 մասնագետներ՝ մեկական մասնագետ ՀՀ Շիրակի, Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի եւ Սյունիքի մարզերից յուրաքանչյուրի համար:

Խորհրդատուները պետք է իրականացնեն հետեւյալ առաջադրանքները՝

- ԵՆԽԾ-ի շրջանակներում իրականացվող միջոցառումների մոնիթորինգի եւ արդյունավետության գնահատման մեթոդաբանության մշակումը,
- Ծրագրի ողջ անձնակազմին ու խորհրդատուներին վերապատրաստեն ՄԳ մեթոդաբանության իմաստով,
- ԵՆԽԾ-ի շրջանակներում իրականացնեն իրենց իրավասության մարզում իրականացվող միջոցառումների ընթացիկ մոնիթորինգը, այդ թվում՝ յուրաքանչյուր միջոցառման իրականացման համար ընտրված կազմակերպության հետ եւ Ծրագրի համակարգողի ու տարածքային համակարգողների ղեկավարությամբ մշակեն յուրաքնաչյուր միջոցառման միջանկյալ արդյունքների չափման ու գնահատման ցուցիչները եւ վերջնական ազդեցության նպատակային ցուցանիշները, ներառյալ գենդերային զգայունության ցուցանիշները, ինչպես նաեւ մշակեն այդ ցուցիչների վերաբերյալ տեղեկությունների հավաքման մեթոդիկան,
- իրականացման տարածքում յուրաքանչյուր միջոցառում սկսելուց առաջ ուսումնասիրեն տվյալ միջոցառման համար նպատակ հանդիսացող խնդիրների լուծվածության նախնական վիճակը: Այս միջոցառումները կիրականացվեն նրանց ներկայացուցիչների մասնակցությամբ «կլոր սեղանների», ֆոկուս-խմբային քննարկումների եւ այլ մեթոդների կիրառումով, հավաքելով խնդրին վերաբերող, ինչպես նաեւ ծրագրի համար անհրաժեշտ բազմազան տեղեկություններ, որոնց միջոցով պետք է ձևավորվեն յուրաքանչյուր միջոցառման ելակետային ցուցանիշները,
- ՄԳ մասնագետները պետք է պատասխանատու լինեն ծրագրի առաջընթացի ընթացիկ մոնիթորինգի իրականացման համար,
- ՄԳ մասնագետը Ծրագրի յուրաքանչյուր միջոցառման ավարտից հետո ընթացիկ մոնիթորինգի ու վերջնական գնահատումների հիման վրա, ԾՀԳ-ին կներկայացնի զեկույց-հաշվետվություններ,
- իրենց աշխատանքների կատարման ընթացքում սերտորեն համագործակցեն Ծրագրի սոցիալական հարցերով մասնագետի, ինչպես նաեւ համապատասխան տարածքային համակարգողի հետ,
- տարածքային համակարգողների եւ խորհրդատու կազմակերպությունների հետ համագործակցված աշխատելով մշակեն ՄԳ ծրագրեր,

- աջակցեն Ծրագրի սոցիալական հարցերով մասնագետին ծրագրի միջոցառումների գենդերային զգայունությունը եւ սոցիալական ազդեցությունը գնահատելու գործում,
- կատարեն Ծրագրի համակարգողի՝ իրենց մասնագիտական պատասխանատվության հարցերին առնչվող այլ հանձնարարություններ:

Ծառայությունները նախատեսվում է իրականացնել 2015թ. հունիսից - 2016թ. մարտ ամիսների ընթացքում:

Խորհրդատուն պետք է բավարարի հետեւյալ որակավորման չափանիշներին եւ պետք է ունենա՝

- բարձրագույն կրթություն՝ սոցիոլոգիայի կամ վիճակագրության, կամ մարքեթինգի, կամ տնտեսագիտության բնագավառներում,
- Առնվազն 2 տարվա հաջողված փորձ Ծրագրի Մ եւ Գ իրականացման համար (ուսումնասիրությունների եւ սոցիալական ոլորտներում որակական ու քանակական տվյալների հավաքագրման փորձը կդիտարկվի որպես առավելություն),
- սոցիալական կյանքի տարբեր բնագավառներում հետազոտական ծրագրերի իրականացման, ինչպես նաեւ զարգացման կամ տեխնիկական աջակցության ծրագրերի մշակմանը եւ իրականացմանը մասնակցության փորձ,
- Երիտասարդների կարողությունների հզորացման, ինչպես նաեւ երիտասարդության հիմնահարցերի ոլորտներում վարվող քաղաքականությունների եւ իրականացվող ծրագրերի իմացություն,
- Մարզի տարբեր տարածքներ հաճախ այցելելու եւ աշխատանքներ կատարելու պատրաստակամություն (տվյալ մարզում մշտական բնակությունը խիստ նախընտրելի է),
- կազմակերպական եւ հաղորդակցական գերազանց ունակություններ,
- հայերենի գերազանց իմացություն (անգլերենի սահուն իմացությունը խիստ ցանկալի է),
- համակարգչային խորացված գիտելիքներ:

Մեծապես խրախուսվում է որակավորված երիտասարդ դիմորդների (30 տարեկան եւ ցածր) մասնակցությունը:

Վերը շարադրված պահանջներին համապատասխանող անհատ խորհրդատուները կարող են մինչեւ **2015թ. հունիսի 12-ը** ներկայացնել հետաքրքրվածության գրություն եւ կենսագրական թերթիկ ստորեւ նշված հասցեով՝ նշելով ծրագրի անվանումը եւ այն պաշտոնը, որին դիմում եք:

Հետաքրքրվածության հայտերը կարող են ներկայացվել նաեւ էլեկտրոնային փոստով:

ՀՀ Ֆինանսների նախարարության
<< Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն >> պետական
հիմնարկի գործադիր տնօրեն՝ Էդգար Ավետյանին
Երեւան 0010, Տիգրան Մեծի պողոտա 4, 3-րդ հարկ
Հեռախոս. (037411) 910 581, 910 590
Էլ. փոստ. info@ffpmc.am